ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ---------- 2022թ. N -Ա

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող ընդհանուր 2504.9 հազ. (երկու միլիոն հինգ հարյուր չորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով երաժշտական գործիքները, Գյումրու համայնքապետարանի «Անի» փողային նվագախումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից օգտագործելու նպատակով նվիրաբերել Գյումրի համայնքին՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Գյումրու համայնքապետարանի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » -------- 2022թ. հ. –Ա որոշման

ՑԱՆԿ
Գյումրու համայնքապետարանին նվիրաբերվող երաժշտական գործիքների

Հ/հ	Երաժշտական գործիքի անվանումը	քանակ	Ընդամենը հաշվեկշռային արժեք /հազ. դրամ/
1.	Կլարնետ in B JUPITER, JCL 700SQ	1	295.0
2.	Շեփոր in B Sonata 6416D-L	1	72.0
3.	Գալարափող in F/Bb Sonata 6442L	1	349.0
4.	Բարիտոն in B Sonata 5501 L	1	195.0
5.	Տրոմբոն n C Bach TB301	1	390.0
6.	Ալտ in Es Sonata 5402 L	1	169.0
7.	Տուբա in B Sonata 5904 L	1	495.0
8.	Փոքր թմբուկ Sonata SA 105-7	1	24.9
9.	Հարվածային գործիքների հավաքածու Pdp PDST2215BK ST5BK	1	515.0
ԸՆԴԱՄԵՆԸ		9	2504.9

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Գյումրի համայնքապետարանի ենթակայությամբ գործող «Անի» փողային նվագախմբի բնականոն գործունեության ապահովման, նյութատեխնիկական բազայի արդիականացման, ՀՀ տարածքային համաչափ մշակութային զարգացման, օժտված և տաղանդավոր, ինչպես նաև սոցիալապես անապահով գյումրեցի երեխաների համար գեղարվեստական կրթության նպաստավոր պայմանների ապահովման անհրաժեշտությունից ելնելով:

Որոշման ընդունմամբ հնարավորություն կընձեռվի Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի «Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների համար գույքի ձեռքբերում» ծրագրի շրջանակում ձեռք բերված 9 անուն թվով 9 երաժշտական գործիքները նվիրաբերել «Անի» փողային նվագախմբին, որը հանրապետության լավագույն փողային նվագախմբերից է և մեծ ներդրում ունի ինչպես Գյումրիում, այնպես էլ հանրապետությունում փողային երաժշտության կատարողական արվեստի ավանդույթների պահպանման և զարգացման գործում:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**